

ւոր տուրքը: Սկսան անոնք հարստահարել ժողովուրդը: Սակայն եւ այնպէս հարկը տաւուէ տարի կը բարդուէր: Դիմեց կաթողիկոսը Շահին զթութեան (1623ին) . «ուժն հարիւր թուման տուեալ եմ . այլ ոչ ունիմ կար տալոյ»: Բայց Շահը յայտարարեց անզիջեւաբար . «Ես յայդ հարիւր թուման մուղադայեդ մէկ փող ինչ է որ չեմ անցներ . այլ թէ մէկ այրի պառաւ լինի մնացեալ որ ես կ'առնեմ»¹:

Զերծանելու համար զլուխը այս անտանելի կացութենէն՝ խորհեցաւ Մելքիսեդեկ ուրիշին փոխանցել կաթողիկոսութիւնն եւ փախչիլ արտասահման: Ի սկզբան Մովսէս նկատի առնուեցաւ . եւ երբ անիկա հրաժարեցաւ, կաթողիկոսին քեռորդին Սահակ յանձն առաւ կաթողիկոսութեան հետ 100 թուման հարկը: Բայց ի վերջոյ նաեւ անիկա դիմեց փախուստի, թողլով իր ետեւ 800 թումանի պարտք մը:

Թէեւ հեռացան զուլերը, թէպէտ չկար մէջ տեղ կաթողիկոս, որ վճարէր պարտքերը, բայց յայտնի էր ամէնուն թէ Շահը պիտի չզիջէր թողուլ եւ ոչ թուման մ'անվճար:

Սիմէոն կաթողիկոս Երեւանցի խօսելով այս «մուղաղայի» մասին՝ ուշադիր կ'ընէ² . «Զայս մի՛ թեթեւ եւ փոքր ինչ կարծիցես, զի ըստ անուանն թէպէտ հարիւր յիշիւր, սա-

¹ Առ. Դաւրիժ., էջ 224:

² Զամբռ., 21: